## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2013 թվականի N 22

## ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Այգեկ համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ *որոշում եմ.*

1. Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողներ (ազատամարտիկներ) Մարզպետ Մանվելի Նալբանդյանի, Լյովա Զալիբեկի Գևորգյանի, Հովհաննես Գրիգորի Միրումյանի, Սուրեն Վաչագանի Գրիգորյանի ընտանիքները հանել Այգեկ համայնքի բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի հոկտեմբերի 14
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2013 թվականի N 23

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ կետի «ա» ենթակետով, 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 17-ի թիվ-10 նիստի որոշումը և Ռուզան Ավդալյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքում գտնվող Ռուզան Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (ծածկագիր 04-009-0003-0042-002) տալ 4-րդ փողոց 5/1 հասցեն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայասատանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի հոկտեմբերի 16

գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2013 թվականի N 24

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքում ՕԿՋ (ծածկագիր 157-005) հողամասին հասցե տալու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություն.
   1) որոշման 1-ին կետի «5ա» թվի փոխարեն գրել «5/1» թիվը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի հոկտեմբերի 21
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-00

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2013 թվականի N 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N15-Ն հրամանով հաստատված հավելվածի 12-րդ կետը՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի 2014 թվականին հերթական ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի հոկտեմբերի 21
գ. Այգեկ

Հավելված<br>Հայաստանի Հանրապետության<br>Արմավիրի մարզի Ծաղիկ գյուղական<br>համայնքի ղեկավարի<br>2013 թվականի հոկտեմբերի «21»-ի N 25 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Սարգսյան Գայանե Վանիկի (1.2-1) - աշխատակազմի քարտուղար